

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻՆ

Ականավոր հայագետ Գրիգոր Խալաթյանը (1858—1912) կարևոր դեր է կատարել հայագիտության զարգացման բնագավառում: Խալաթյանի երախտիքը մեծ է հատկապես հայ ազգագրության ասպարեզում: 1837 թ. հրապարակելով իր «Հայ ազգագրության ծրագիրը», նա փաստորեն մեղանում սկզբնավորում է գիտական ազգագրությունը: Խալաթյանը նամակագրություն է ունեցել ժամանակի նշանավոր բազմաթիվ գիտնականների ու մշակութային գործիչների, այդ թվում և ազգագիր, գրող, հասարակական, եկեղեցական գործիչ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի (1840—1892) հետ:

Սրվանձտյանցը, որ ճամփորդել է Տաճկահայաստանի գրեթե բոլոր վայրերը, իբրև եկեղեցական առաջնորդ պաշտոնավարել է Մուշում, Կարինում, Տրապիզոնում և այլուր, իր երկերով կորստից փրկել է հայ ժողովրդական բանահյուսության շատ զանձեր, հատկապես Սասունցի Դավիթ էպոսի պատումները:

Հրապարակվող նամակները պարունակում են հայ ժողովրդական բանահյուսությանն ու ազգագրությանը վերաբերող բազմաթիվ կարևոր փաստեր, որոնք պարզաբանում են երկու անվանի գործիչների կյանքի և գրական ժառանգության ուղադրավ մի քանի կողմերը:

Փաստաթղթերը պահվում են Չսրենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Գարեգին Սրվանձտյանցի ֆոնդում (բաժին II, №Ն 335—341):

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Փ Ա Ս Ս Թ Վ Թ Ե Ր

1.

Գերապատիվ Հայր.

Անցյալ շաբաթ վերադառնալով Գերմանիայեն, ստացա սեպտեմբերի 28-ին գրած նամակնիդ՝ երկրորդը ղկնի 1881 թ. ապրիլի 24-են, որ ուղարկած էիք Վանեն՝ հանդերձ Դավիթ Սասունցու վեպի առթիվ հաղորդած ծանոթությամբբը¹։ Յուր ժամանակին դորա պատասխանը գրած եմ Ձեզ, Կղարմանամ, թե ինչո՞ւ ստացած չեք Դավիթի ուս. թարգմանությունը, զոր դեռ 1881 թ. ուղարկել էի ի պատրիարքարան՝ Ձեզ հասցնելու. հետ այնորիկ՝ չգիտեմ, ստացե՞լ եք արդյոք անցյալ ապրիլին «Արևել. Մամլո» միջոցով Ձեզ ուղղածս նամակը՝ «Փարպեցի»- երկասիրությունս հանդերձ։ Իսկ իմ վերաբերմամբ՝ վերջին գրությունդ մեջ հիշատակած երկու նամակներն Պոլսեն— ստացած չեմ. թերևս հասցեն մոռացած լինիք գրելու կամ շփոթած, թեև այստեղ նամակները շատ հաղիվ կկորչին։ Բնչևիցե. ուրախ եմ անչափ, որ քանի ժամանակ բնավ տեղեկություն չունենալով Ձեզանից, կիմանամ, թե Պոլիս եք այժմ և պատվական աշխատությունդ հրատարակությամբը ղբաղած։

Գալով այդ աշխատությանց՝ ասելու է, որ «Համուլ-հոտուլի»³ ծրագիրը միանգամայն գոհացուցիչ է. ըստ երևույթին մեր նոր գրականությունը «Մանանյան»⁴ հետո պիտի հարստանա մի այլ ընտիր հավաքածուով։ Այսքանը միայն թույլ կուտաս ղիս դիտելու և խնդրելու, որ եթե հնար է, գրքույկի վերջը տեղադրած գավառական բառերը կարելի ունի շափ լինեին, և ապա (որ ոչ պակաս կարևոր է), եթե «Արևել. Մամլո» մեջ լույս տեսած գողտրիկ երգերը⁵ արտատպած չեն այդ հավաքածուի մեջ,— կամ իսկույն արտատպելու է երգերի շարքում և կամ իբրև հավելված կցելու է գրքի վերջը։ Եթե այդ ևս անհարմար տեսնիք, գոնե «Թորոս Աղբոր»⁶ հատորին⁶ կցելու է։ Այս պնդումը այն խորհուրդ ունի, որ «Արևելյան» մամուլը շատ տարածված չլինելով մեր մեջ՝ հարյուրավոր գրագետներից հաղիվ 3—4 անձինք կստանան այդ հանդեսը՝ գեթ ի Ռուսիա. իսկ այն սիրուն երգերը ավսոս է թարցնել ամսաթերթի էջերում և արժե կրկին և կրկին տպագրելու։

Իսկ որ ինչ «Թորոս Աղբոր»⁶ հատորի մասին՝ հաղորդեցի պ. էմինին ինչ որ պետք էր և կարդացի նորան Ձեր նամակը։ Ինչպես և առաջ՝ նա պատրաստ է յուր կողմանե նույաստել Ձեր հավաքածուից ի լույս ածելուն. ուստի և խնդրեց ինձ հարցանել Ձեզանից, որչա՞փ կարժե արդյոք մերձավորապես այդ գրքի տպագրությունը ի Պոլիս, ի նկատի առնելով, որ թե՛ թուղթը և թե՛ տիպը փոքր ինչ ավելի աղնիվ անելու է, քան, զորօրինակ, «Մանանյանը»։ Ընդ սմին բարիհաճեցեք խնդրեմ «Թորոս Աղբոր» (Բ հ.) բովանդակության մի համառոտ ծրագիր ուղարկել պ. էմինին։ Կհուսամ՝ նամակնիդ չեք ուշացնիլ։

«Համուլ-հոտուլի» ուղարկելուս՝ խնդրեմ 7—8 օրինակ ավել ղնեք (նշանակելով արժեքը), զորս կբաժանիմ այստեղ ցանկացողաց ես ինքս։ Սոցա հետ կսպասեմ և Ձեր խոստացած «Գրոց-բրոցը»⁷ և մի օրինակ՝ ինձ տակավին

անծանոթ ու մինչև այսօր ոչ մի տեղ չգտած— «Շուշան Շավարշանա»¹։ Եթե տակավին ստացած չեք իմ «Ղ. Փարպեցին» ևս և «Դավիթի» ուս. թարգմանությունը, որ թերևս մինչև այսօր պատրիարքարանն է ընկած, գրեցեք ինձ և ես կուղարկեմ անմիջապես։

Նամակները և ծրարները կուղարկեք ինձ այն հասցեով, ինչպես որ վերջին անգամ գրած էիք (կաղ. Ճեմ.)։

Ընդունեցեք իմ խորին հարգանաց հավաստիքը դեպի Ձեզ,

Խ. Մ. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆ

15 հոկտեմբերի, 1884

Ի Մոսկվա

2.

Գերապատիվ Հայր.

Հաղիվ մի շաբաթ է, որ վերադարձել եմ Պետերբուրգեն (ուր դեգերեցա մասո շափ) և ահա սեղանիս վերա կգտնիմ Ձեր պատվական նամակը՝ քանի գրոց հետ միասին, որոց մեջ կփայլեր վաղուց սպասածս «Համով-հոտովը»։ Հուսալով Ձեր ներողամտությանը՝ ինձնեն անկախ պատճառներով նամակիս ուշանալու համար, կհայտնեմ Ձեզ մասնավոր «Համով-հոտովի» առթիվ իմ անբավ ուրախությունս, հայլում նվազի թողլով խոսելու գրքի բովանդակության և արժանավորությանց մասին, որք բազում և մեծ ուշադրության արժանի։ Իսկ որ ինչ հաղագս «Թորոս Աղբոր» Բ հատորին, մեծ. պ. էմինը, որին թերևս ավելի հաճելի կլիներ նպաստել ժողովրդական գրականության վերաբերյալ նյութոց հրատարակության (ավանդությունք, հեքիաթ, երգ և այլն), ինչպես վաղ ուրեմն քանիցս գրած եմ Ձեզ, Ձեր նամակը կարդալեն հետո, այնուամենայնիվ հավանություն հայտնեց օժանդակ լինել ըստ շափու կարյաց՝ ուղարկելով Ձեր հրատարակության համար 600 ֆրանք, որ կստանաք մի-երկու օրեն «Արևելքի»¹ խմբագրության հասցեին առ Ձեզ ուղղյալ, և գրել Ձեզ երկտող մի, որ կգտնիք ներփակյալ՝ նամակիս մեջ.

Ի սրտե ուրախ լինելով, որ իմ միջնորդությամբս կարողացա որևէ կերպով օգտավետ գտնվիլ Ձեզ, որ իմ պարտքս կհամարիմ այժմ և միշտ՝

Մնամ խորին հարգանքը

Խ. Մ.

ԳՐ. ԽԱԼԱԹՅԱՆ

9 հունվարի (21) 1885

Ի Մոսկվա

Հ. Գ.— Ուղարկածդ 8 օրինակ «Համով-հոտովը» տակավին ստացած չեմ։

— Պրոֆես. Քերովբե Պատկանյանը² Ձեզի բարե կհիշեր և կխնդրեր շնորհակալ իրեն ևս բաժին հանել «Համով-հոտովեն»։

— Նամակս և դրամը ստանալեն հետո՝ խնդրեմ անհապաղ տեղեկություն տաք ինձ։

Նույն

3.

Գերապատիվ Հայր.

Ես պարտավոր եմ Ձեր առաջ՝ այսօր միջոց նամակ չգրելով Ձեզ։ Սակայն այս լռությունը չէր բնավ անխորհուրդ. ես շուրջի գրել Ձեզ՝ առանց քանի մի խոսք հիշելու Ձեր երկու վերջին երկոց մասին. իսկ այդ հիշելը կպահանջե

8 Հանդես, N 1

ջեր նախապես ուսումնասիրել դրածները, որ, ըստ կարգին, կկարոտեր ժամանակի:

Վերջապես պատեհ ժամ գտնելով, գրիչ առի ձեռս ողջունելու և շնորհակալ լինելու Ձեզ, վայր մի խոսելու ու խորհրդակցելու Ձեզ հետ այն նյութոց վերա, ույթ հուշակագիտական և գրական ամենամեծ վայելչություն կպատճառեն հասկացող անձին՝ հայ ժողովրդյան անարվեստ, բայց վսեմ հանճարի հետ փայլեցնելով նաև ծրագրողի տաղանդը, որ գիտև շունչ ու հոգի փչել անշունչ սարերին ու ձորերին, որ յուր բուռն երևակայության թևերի վերա կխլե, կքաշե կտանի մեր սիրտը, հեռո՛ւ, հեռո՛ւ հայրենյաց սուրբ հողի թոհերը ու բոհերը, զգալ կուտա ինչ որ ինքն է զգացել, ու կպղտորե մրրկածուխ վանա ծովի նման, կփղձկեցնե, արտասուք կքամե... Անցնինք սակայն «Համով-հոտովին» ի մասնավորի խոսելու:

Ինչ է յուր առաջին ճաշակ. հուշիկ հառաչանք հայրենասեր սրտի, դոախտային վայրուց վառվռուն նկարներ, անմահական տեղյաց բուրումներ, որք մարդուս հոգին կփառավորին: Երկրորդ ճաշակը նույնպես ընտիր, նույնպես գեղեցիկ, բայց թվի ավելի «Թորոս Աղբոր» բովանդակության պատշաճիւ Այս իմ կարծիքն է:

Երրորդ ճաշակը. վաղուց սպառած հեքիաթներ՝ բաղմաթիվ բաղմատեաակ, շատ հետաքրքրական, մանավանդ հնադույնք՝ ավելի առասպելական գրուցաց նմանողք, որոց լույս տեսնելով՝ երևան կուգան հայ հեքիաթների մինչև այսօր անծանոթ (գրի շառած՝ կամիմ ասել) ոճեր, եղանակներ, մանրամասնությունք, հատկանիշք: Այս տեսակեն են՝ Զուլյուսիա, Պղտիկ Միրզան և Դե Գորգոշան, Ծովու աղջիկ, Մատնիկի ակն, Աղբյուրի հարսն, Սալմանն ու Ռոստոմն, Անտես Աննման, Օձամանուկ, Արեամանուկ, Արծաթ մաղեր, Ոսկի ծամեր,— հեքիաթներ, որոց նմանները կտեսնինք գերմանացոց, սլավոնաց և այլ հնդիկ-եվրոպական աղգաց մեջ, ուստի և հույժ կարեոր են դոքա բաղդատությունց համար: Այս անհերքելի արժանավորությանց հետ թույլ կուտամ ինձ մի տեղեկություն անել հեքիաթների լեզվի մասին, որ ինչպես Ձեզ քաջ հայտնի է, շատ կարեոր է: 26 հեքիաթեն միայն երկուսը (Տիգրանակ[երտի] բարբառով Դ և Զ) գրի են առած ճիշտ տեղական բարբառով՝ իրենց սեպհական հատկանիշներով. մնացյալը գրված է գրականը բարբառաց դարձվածոց հետ խառն ոճով, որ լեզվագիտական պարապմանց համար մեծ կարեորություն չէ կարող ներկայացնել: Ուստի այս կողմանե (ըստ լեզվույն) «Մանանայի» պատվական հեքիաթները (Դառնիկ Աղբերը, Անմահական խնձորը, Երազատեսը, Նենգավոր մայրը, Նահապետենց աղջիկը, Հաղարան Բյուրյուլը), որոց նման ուղիղ, ճիշտ թարգմաներ ժողովրդական հոգուն և մտքին, ու վերին աստիճանի կենդանի, անպաճույճ ու բնական գրություններ նաև եվրոպացոց հեքիաթի-գրականության մեջ սակավ կգտնվին— «Մանանայի» հեքիաթները, ասում եմ, լեզվագետի համար նախադասելի են: Հետ այսորիկ դիտելու է, որ «Համով-հոտովին» հեքիաթների մեջ կան ոմանք, ույք ավելի բարոյական առակի կնմանին (Ժ, ԺԱ, Ի...) և կամ ավելի զվարճալի մոռալների (ԺԷ, ԺԸ, ԻԱ...), որպես և կան հին հեքիաթներ նոր եղանակներով նորոգած և համեմած (Ալթուն բաշ Բալըղ, Տունյա Գողալ, Պառլու տղան), որոց հնագույն նախնական օրինակք ցանկալի են հավետ: Ձեր հավանությունամբ կնշանակեմ ես (առանձին թերթի վերա) մի քանի հեքիաթների անվանք, որոց բառացի, ժողովրդական հոգուն և լեզվին միանդամայն հավատարիմ գաղափարիլը կամ գրի առնիլը շատ կա-

րևոր է. մանավանդ որ այսու դուք բոլորած, լրացրած կլինիք մեծ մասամբ մի պատվական շարք հայ հեքիաթների, որք համապատասխան են ներկա բանասիրական, դրական և լեզվագիտական պահանջմանց: Այս մեծ ծառայություն է մայրենի դրականության, որդես և առհասարակ գիտության համար:

Աննաման է շորրորդ նաշակը. որքան բազմատեսակ նյութեր, որքան բնական, կենդանի դժգոհանք շեղումներ, որոց 'Դուք դիտել եք ժողովրդյան մեջ և այնպես սիրով ու մտառությամբ գրի անցրել. որքան ձգարիտ պատկերներ կա գյուղական կյանքի, որք մի երկու գծով, մի երկու ականակով ամբողջ գաղափար են տալիս մեզ և որոց ուշփին, կորովին և կենդանության շեն համեմատիլ ո՛չ մի գրագետ դրիչ, ո՛չ մի բանաստեղծի հանճար: Այս 70—80 փոքրագիր էջերի մեջ ի՞նչ ասես, որ չկա. այստեղ՝ հարսանյաց ուրախ և նույն իսկ քահնի հարսների ու կարմրայտ, մրահոն չքնաղ աղջիկների արծաթյա ծիծաղի նման՝ զվարճալի ու աղմկալի երգերը, հազար նազերով ու սաղերով պարերը, այնտեղ՝ սիրո երգեր, ուր սիրով զարկված կտրիճը «պաղի կտորի պես հալվում է իր սիրուհու հրեղեն արտասուքից»... իսկ Հարոն ու Մայրոն, որ գինով (անշուշտ սիրո գինով) սարխոշյուցներ է զլած ու հիվ (ընդոցե), փոխադարձ սրամիտ, կայտառ հանդիմանություններ են անում, փոխ ընդ փոխ նմանեցնելով իրար իրանց պես խորոտիկ լուսնակին, կռնկուն, կաքավին, արծրթած խնձորին, ֆառֆոռ ֆինջանին... այստեղ զվարճալի տողեր՝ հայ գեղջուկի զավեշտասեր բնավորության արտադրությունք՝ ծուլլ հնձողների, լազլազի, բզեզների, կաղ եղան վերաբերմամբ, այնտեղ՝ յուր վաղահաս մեռած սիրելի ամուսնուն կամ զավակին աղեխարշ ողբացող հայ գյուղացի կնոջ մահաերգը (Մանի), որ չգիտե ինչպես մխիթարվի յուր սգո մեջ, կուլա, կերգե, կգովաբանե յուր սիրելի առարկան, կոգեորի ու կխաբվի պահ մի՝ կենդանի կարծելով նորան, ապա դարձյալ ուշքի կուգա լալով. «տուն էկուր, տուն էկուր, տղաս», կկանչե հուսահատ...

Բացի բանասիրական մեծ հետաքրքրությունեն, որ կներկայացնեն երգերը՝ կարևոր են նորա և լեզվի կողմանե: Երգի մեջ ավելի լավ կպահպանվի գավառական բարբառի ոգին, նորան հատուկ ձևերը և դարձվածները, վասն զի շափի կամ ոտի շնորհիվ՝ սակավ է ենթարկվում նա փոփոխության. ուստի լեզվագետի համար հին երգը անգին գանձ է:

Նույն արժեքը ունին և մի քանի աղոթքները, ույք տեղի են գտել ժողովածուի մեջ, և որոց կազմությունը թերևս երգերից հնագույն լինի: Չորրորդ ճաշակի դարդերեն մին է և «Սարև Սիփանե», որ նաև բրդաց լինելով՝ օրինակ կարող է լինել առ մեղ տակավին անհայտ Ասիո բնարական կամ սիրահարական վեպի: Ո՛ւր էր, եթե գտնվեին հայ ժողովրդական ավյունով ստեղծած այդպիսի վեպեր...: Բայց մինչ այն՝ մեծապես կպարտաշվորա՞ցնեք բանասիրաց՝ հաղորդելով բրդական մուսայի արդյունքը, ույք՝ ինչպես կերևին, լի են վառ զգացմունքով, անկեղծությամբ և խորին ողբերգականությամբ (դրամատիկա): Կսպասենք, թերևս Սիամանտոն և Խըհեղարեն վերջինը չլինին:

Ի վերջո՝ շատ ընտիր է բառապաշար, որ թեև մեծ չէ, բայց և այնպես լավագույն քան «ՂՄանանայինը». վասն զի շատ գեղեցիկ եք արել ա՛յս անդամ նշանակությանց հետ պետեղելով նաև վկայությունք՝ գործածության օրինակներ: Մյուս կողմանե իզուր թողել եք «Մանանայում» ընդունած ոճը՝ նշանակել համարյա յուրաքանչյուր խոսքի ո՛ր գավառում գործածական լինիլը (Վան., Մշ.), որ լեզվագետի համար շատ մեծ դյուրություն է: Առհասարակ ցանկալի է՝ որ-

ժան հնար է շատ բառեր մուծանել «Բառգրքի»¹ մեջ, վասն զի այդպիսի բառ-գիրքը ոչ միայն անծանոթ կամ դժվարիմաց խոսքերի համար է, այլ նաև լեզվաբանական բարդությունց։ Այս նկատմամբ ես լրացնում եմ «Մանանայի» բառարանը՝ մուծանելով պակաս բառերը, որոց մի քանիսի նշանակությանց մասին Ձեր օգնությանը պիտի դիմեմ։ Այստեղ դեպ լինի հիշել և մի հանգամանաց մասին, որ թեև ըստինքյան աննշան է, բայց Ձեր գրքերով մասնագիտապես սլարապողի համար շատ զգալի է. այդ՝ նյութոց ցանկի պակասությունն է, որ բացի «Թորոս Աղբոր» Ա մասեն՝ Ձեր մյուս դրածներեն և ոչ մեկը ունի։

Ստիպված եմ ինքս ցանկ կաղմել և գրքի կողքը կցել։

«Թորոս Աղբոր» Բ մասին վերաբերմամբ այս անգամ ես երկար չեմ խոսիլ՝ տակավին գրվածը ամբողջապես ուսումնասիրած չլինելու պատճառով։ Այսքան միայն կասեմ, որ սպասածես շատ վեր է և նույնիսկ առաջին մասեն՝ շատ բարձր։

Բացի գավառաց, քաղաքաց և այլ տեղյաց լիամասն ու գեղեցիկ նկարագրություններեն, այս կամ այն ժողովրդյան սովորությանց, բարոյից և ավանդությանց մասին հույժ հետաքրքրաշարժ և օգտավետ ծանոթություններեն, արժանի է խորին ուշադրության Ձեռագրաց մասը, որ յուր դասավորությամբ շատ հարմար է այս անգամ։ Անբավ շնորհակալություն Ձեզ այս պատվական երկասիրության համար։

Միևնույն տպավորությունը գործած է «Թորոս Աղբարը» նաև այ. էմինի վերա, որ մոտերքս ինքը կգրե Ձեզ։ Բայց մինչ այն՝ նա խնդրեց ինձ հաղորդել Ձեզ, որ ինքը բոլորովին դոհ է Ձեր ուղարկած 12 օրինակեն. իսկ այլ տեղեր կամ անձանց ուղարկելու հաղիվ թե հարկ կա, բացի 4—5 օրինակներեն Անդր-կովկասի բարձրագույն հայ դպրոցաց։ Դորա փոխարեն նա կխնդրե ուղարկել իրեն Ձեր այն գրվածները, որոց նա չունի. 1) Ընթերցարան Ա և Բ². 2) Քրիստոնեական ուսումն Հայաստան եկեղեցւո՞ւ³. 3) «Հնոց և նորոց» (սոցանից եթե կարելի է երկ-երկու օրինակ. մեկը ինձ համար). 4) «Թորոս Աղբար», Ա մասն. և 5) «Շուշան Շավարշանա» (մեկ-մեկ օրինակ)*։ Բացի սորանից՝ նա կխնդրե՝ Լթե հնար է, նեղություն քաշել տեղեկանալու. չկա՞ն արդյոք այդր ի Կ. Պոլիս ընտիր գրչագիր օրինակներ Թում. Արծրունվո պատմության՝ թերևս հնագույն և տարբեր՝ տպագրության (1852) ծառայած Աղթամարա օրինակեն և չէ՞ր կարելի արդյոք արտագրել տալ դոցա (անշուշտ պատշաճավոր վարձատրությամբ) կամ այլ միջոցով ձեռք բերել. վասն զի այ. էմինը մտադիր է Արծրունյաց տան պատմության երկրորդ տպագրությունը⁴ ձեռք ղարկել՝ եթե ընտիր գրչագիր գտնվի։

Ետ այսորիկ՝ մի խնդիրք ես կա առ Ձեզ, որո կատարումն կհուսանք թե Ձեզ ևս կամաց պիտի լինի։ Տակավին 1874 թ. «Գրոց-բրոցի» մեջ, որպես և հետո «Մանանայի» մեջ քանիցս դիտած եք Դուք հայկական հնությանց և աղ-գային ավանդությանց ծրագրող քանի մի անձանց մասին՝ դուլասանությամբ հիշելով նոցա աշխատությունները— Տեր-Սարգսյան՝ Եր. Եպիսկոպոս⁶, Փիլղալեմյան⁷, Աղվանյան⁸, Թովմասյան⁹, Շիրոյան¹⁰, Արդյոք այս 10—12 տարվա ընթացքում չդտան դոքա ուրե՞ միջոց հրատարակելու իրենց գրվածները. և եթե անտիպ են տակավին, կարելի չէ՞ր տեղեկանալ այդ գրվածոց մանրամասն

* Մեծապես շնորհակալ կլինեի, եթե դոցա հետ ուղարկեիր և մի օրինակ Կահեկեցու ղըր-քուկից⁵։

բովանդակություն, որպեսզի պատեհ՝ ղեկը ում հոգ տարվի նոցա տպագրու-

թյան վրա: Այդպիսի ղեկը ցիկ գործեր ինչու՝ պիտի փոշոտվին անկյունները: Այդ տեսակեն է և տաղանդավոր պ. Ալլահվերդյանի ղեկը՝ «Զեյթուն»¹¹, որ պատիվ ունեցա ընդունիլ հեղինակին և ընթերցա մեծ վայելչու-թյամբ, թեև մինչև այսօր հարմար միջոց գտած չեմ շնորհակալությունս հայտ-նելու աղնիվ պարոնին: Գիրքը կադմած է մեծ խնամքով՝ ղկնի բարեխիղճ ուսումնասիրության Զեյթուն աշխարհի, բնակչաց կյանքի, սովորությունս և լեզ-վի: Նյութերը ևս շատ լավ են դասավորված: Այս մի հոտավետ փունջ է, որ բոլորած կապած են ամեն տեսակի ծաղիկներ, թեև ծաղիկների տեսակները և ոչ քանակությունը է բազում: Պետք է կարծել, որ այս մի պատվական ու հա-րուստ նախադիծ է, որո յուրաքանչյուր մասն կամ բաժինն ժամանակին կարող է ավելի լիամասն մշակվիլ և լրացվիլ, մանավանդ գրական մասն՝ երգերը և հեքիաթները, որք մի կողմանն ժողովրդյան ճաշակագիտական զգացմանց և բարոյական զաղափարաց ճշմարիտ արտահայտիչներն են և մյուս՝ բարբառ-ների ուսումնասիրության ամենակարևոր նյութն են կադմում: Ահա գործ, որ արժանի է համակրանաց և քաջալերության:

Բոլորովին այլ է պ. Միրախորյան¹². յուր նկարագրական ուղեորությամբ ասեմ, թե ուղեորական նկարագրությունամբ, որ ճշմարիտ խոստովանեմ, ծանր տպավորություն թողեց վերաս: Պատանի ուղեորը (նորա հասակը յուր գրվածեն կնկատվի) շատ սխալ կարծիք ունի, եթե կմտածե, թե յուրաքանչյուր, որ ճա-նապարհորդել է Հայաստան, կարող է և ընտիր, վաչելուչ նկարագրություն հո-րինել յուր տեսածին. այլ է ուղեորություն, այլ է նկարագրելու, ծրագրելու ըն-դունակությունը, որ ամեն մարդու տված չէ: Եվ այս մեր խոսքերը ամենեն լավ սպացուցեց ինքը պ. Միրախորյան յուր իսկ վերա: Թեև նա ամեն ճիշդ կթափն ցուցանել յուր գրվածը իբրև արժանավոր հիշատակարան Հայաստանի ստորա-գրության, ծանությունց և ավանդությունց՝ հիմնյալ նորագույն տեղեկությանց վերա, կադմյալ մինչև այսօր չփոխված «նոր ուղղությամբ» (նկար. ուղ., Բ մ. էջ 4) — տեղագիր «Սարեն ու ձորեն, հենն ու նորեն և (միայն) գիտնոց պի-տանի»: Բացի վերոհիշյալից՝ իր տեղեկագրությանց մեջ պ. Միրախորյան կա-պացուցանե և մի այլ ճշմարտություն, որ չէ կարելի չգիտել: Կարելի է հետևել մի տաղանդավոր գրչի օրինակին, փոխ առնել ձևերը, նորա ոճը, նորա ծրա-գրելու եղանակը՝ վերջապես նմանիլ նորան ամենայն մասունս, բայց որ ինչ օրինակած գրվածի արժանավորության կվերաբերի՝ այնքան հեռու լինել յուր վարժապետից¹³, որչափ երկիրքը երկրից. թող որ նորավարժ գրիչը յուր երե-խայրիքում բնավ չի հիշում երախտագիտության զգացմունքով (եթե նկատի չառնիք նախարանի անվայել ակնարկությունը) այն անձին, որ առաջին աղ-գագիրը (էթնոգրաֆ) լինելով մեր մեջ՝ այսու և վարժապետ եղավ շատերի հա-մար՝ ի թիվս որոց և մանավանդ իրեն պ. Միրախորյանին: Անշուշտ պատանի ուղեորը միշտ կարող է ձգտումն ունենալ օգտակար լինել մայրենի գրականու-թյան և հայտնի չափով հասնել ևս յուր նպատակին, բայց անձնասպաստանու-թյունը, յուր գլուխ գովելը և նկարագրելի նյութոց ոչ միշտ բարեխիղճ ուսում-նասիրությունը կվնասին նորան: Բազմաթիվ թերություններեն ևս կանգնիմ մի քանիսի վերա:

Պ. Միրախորյան գիտե կամ կարգացել է, որ տեղագրությանց մեջ հնու-թյունք միշտ մեծ տեղ են բռնում և արժանի են ուշագրության. ուստի ինքն ևս հետևում է այդ սովորության:

Բայց որքան հիասթափ է լինում ընթերցողը, երբ կարդալով նյութող ցանկը և նկատելով, օրինակ, «Քուել—պատմական դյուղ» խորագիրը, բաց է անում 29—31 էջերը (Բ մաս) և գյուղի պատմական հնությունը, որ 70 տարուց ավելի չէ, հիշած է 4 տող աննշան ծանոթությամբ։ Նույնը ասելու է «Ափիկյուղել և յուր հռչակավոր ավետարան» հրապարիչ խորագրի մասին (անդ, 261—262)։ Թե ինչու է հռչակավոր այդ ավետարանը, ի՞նչ արժեք ունի, ի՞նչ հնություն, ի՞նչ հարցասիրելի հիշատակարան— սոցա մասին բնավ խոսք չկա։

Կան և այլ տեսակ անճշտությունք (եթե ուրիշ խոսք չասենք)։ Չգիտեմ, ո՞ր տեղից է առել պ. Միրախորյան, թե Մշո Ս. Առաքելոց վանքի մոտ գտնված խաչաքարինք, որք խմբովին «Գերեզմանք թարգմանչաց» կկոչվին,— կամփոփեն իրենց տակը Խորենացու, Ղազարի և այլոց նշխարքը։ Այս նոր դյուղ է, թե տգիտություն է։ Իսկ պարունի աշխարհագրական անունոց ուղղագրությունը միանգամայն ասլիցնում է ինձ. Անձեացյաց գավառը (որ և «Անձուացեաց» ասի առ Խորենացի) և առ այլ մատենագրությունս) անձավ (բարանձավ) բառեն առնված լինելով պ. Միրախորյան միշտ Անձրեացեաց» կգրեն և երևույթին «անձրե» բառեն կաղմելով, և այսպես ոչ մեկ կամ երկու անգամ (տե՛ս Բ. մասն, էջս 44, 54, 121, 184)։

Գրքի ուղղագրության արժանի հատվածներեն Բարթուղիմեոս Առաքելովերա եղած ավանդությունք և համանուն վանուց կառուցման պատմությունն է, որք այսուամենայնիվ արժին ավելի փորձառու գրչից ծրագրվի։

Ցավելով եմ ասում ես այս բոլորը, վասն զի թանկ է ինձ հայ ազգագրության ընթացքի յուրաքանչյուր քայլը, յուրաքանչյուր աջողությունը։ Իսկ պ. Միրախորյանի «Տեղագրությանց» նման գրվածներ հաղիվ թե կարենան բարձրացնել մեր ազգագրության վարկը կամ հառաջագիմություն անել այդ գիտության մեջ, որ արդեն դուրս է ելած յուր մանկության հասակին և այժմ ավելի հասուն, ավելի ծանրակշիռ և նյութավետ երկասիրությանց կկարոտի։

Այսքան Միրախորյանի մասին։

Կհիշեք անշուշտ, որ նամակներս մեկի մեջ խնդրած էի Ձեզմե մի քանի օրինակ «Համով-հոտովեն»՝ Ձեզ համար իսկ այստեղ բաժանելու և թնայետ Իւր գրեցիք՝ թե ուղարկել եք 8 օրինակ, բայց ես չէի ստացել և Ձեզ ես հաղորդել էի այդ մասին։ Բայց անցավ իմ գրութենես 4—5 շաբաթ և ահա կըստանամ Պետերբուրգեն գրաքննակա՞ն կնիքը ծրարի վերա գրոշմած 5 օրինակ «Համով-հոտով», որ շատ դարմացրեց ինձ, թե այնու, որ փոխանակ 8-ի 5 օրինակ հասավ ձեռս և թե այնու, որ գրքերը Պետերբուրգի գրաքննության վարչության են ուղարկվիլ (Մոսկվա հայ գրքերի գրաքննիչ չկա), մի դեպք, որ ուրիշ ժամանակ չէր պատահում։ Ինչեիցե, «Համով-հոտովները» իսկույն բաժանեցի ծանոթներուս յուրաքանչյուրը 3 ֆր. 50 սանթիմով, որո գումարը— 17 ֆր. 50 սանթ., պատեհ զեպրում կհասցնեմ Ձեզ։

Սպասելով Ձեր գրությանը, որ հուսով եմ չեք ուշացնիլ

Մնամ հարգանք

Խ. Մ. ԴՐ. ԽԱԼԿԻԹՅԱՆ

Հ. Գ. — Կերևի թի հասցեիս ռուսերեն դրուժյունը միշտ նեղուժյուն կպատճառե Ձեզ՝ ուստի Ձեր խնդրանաց համաձայն՝ կհաղորդեմ ֆրանսերեն գրությունը, որ արդարև դյուրին է և այստեղ ևս ընդունելի և հասկանալի. Moscou, institut Lasareff Mr Khalatianz.

Եթե նեղուժյուն չի լինի Ձեզ՝ խնդրեմ հաղորդեցիք ինձ Ձեր նամակի մեջ՝ արդյոք քանի՞ ֆրանկ արժե նորայրի բառարանը¹⁵։

Նույն

4.

Գերապատիվ Հայր Գարեգին Սրվանձտյանց

Ի Տրապիզոն

Հարգելի բարեկամ.

Նախ՝ խնդրեմ խոնարհաբար ներող լինիք, որ Ձեր վերջին նամակը ստանալես հետո՝ ղանազան առիթներով և գլխավորապես պ. էմինի հոբելյանի¹ պատճառով, չկարողացա մինչև այսօր պատասխան գրել Ձեզ։

Ապա՝ հատուկ շնորհակալ եմ Ձեզնեն, որ հիշել էիք նամակիդ մեջ հայ զրուցոց մասին գրածս ռուս գրքույկի թարգմանությունը և տպագրությունը։ Պետք է Ձեզ ասեմ, որ մինչև Ձեր նամակը ստանալս՝ ես տեղեկություն չունեի այդ մասին բնավ. «Արևելք» լրագիրը Ձեզ հայտնի է, տարիեն ավելի է, որ Ռուսաստան արգելված է և միայն շաբաթական առանձին համարներ կուղարկվին մեզ՝ իբրև ամփոփումն շաբթվա մեջ հավաքված կարևոր տեղեկությանց, որոց մեջ հայ զրուցոց մասին ոչինչ խոսք չկար։ Ձեր նամակեն հետո՝ ես իսկույն թուղթ գրեցի Արևելքի խմբագրությանը, խնդրելով ուղարկել ինձ՝ գեթ սյունակներով կտրելով, այդ համարները։ Եվ ահա Տոնապետյան² ստորագրությամբ կստանամ մի սիրելի նամակ և նորա հետ գրքույկիս թարգմանությունը³։ Այդ թարգմանությունը, առհասարակ, վատ չէ, թեև շատ կարևոր տեղեր և ծանոթությունք բաց են թողած, մասամբ ևս քանի տեղեր անճիշտ է թարգմանած, որով հեղինակի կարծիքը թերևս անհասկանալի երևի։ Բայց այս բոլորի մեջ մի զանցառություն մանավանդ ես աններելի եմ համարում թարգմանչին. այդ բնագրի երկրորդ երեսում զետեղված հոգվածիս աղբյուրների մասին ծանոթությունն է, որ չգիտեմ ինչո՞ւ բաց է թողել պ. Տոնապետյան։ Մտադիր և բանիմաց ընթերցողը՝ կարդալով «Արևելքի» այդ համարները, պիտի փոքր ինչ զարմանա, թե այս ի՞նչ տարօրինակ երևույթ է. պ. Խալաթյան Մոսկվա կ'նստի և յուր հոգվածը՝ կազմելով, ինչպես կերևի, մեծ մասամբ հ. Սրվանձտյանցի գրվածներեն, բնավ և խոսք մի չի հիշե այդ մասին, ինչ որ յուր գրվածը ռուս քանասիրաց համար է։ Արդարև, այսպիսի մի ստղտանք շատ կ'հարմարեր ինձ, թե ռուս բնագրի մեջ ևս մոռացման մատնեված լիներ մեր տաղանդավոր և սիրելի ժողովրդական մատենագիր հ. Գարեգինի հիշատակը. բայց Ձ-րդ երեսում այսպես է հիշած. «Ներկա հոգվածը կազմելուս՝ նորա նյութը քաղել եմ գլխավորապես բնիկ հայկական Վան և Մուշ գավառներում՝ ժողովրդի կյանքին, հնությունց և գրականության ամենևին լավ ծանոթ հ. Գարեգին Սրվանձտյանցի աշխատությամբ հավաքած՝ հայ ժողովրդական զրուցաց, առասպելաց, առակաց, հանելուկների, երգերի ժողովածուներեն»։

Բայց հայսմանի, ավելորդ չեմ համարիլ հատկապես Ձեզ համար դնել այստեղ և մի քանի կարեոր անճիշտ թարգմանություննց ուղղությունք՝ ի ճիշտ ըմբռնումն հայտնածս կարծեաց*:

Մեր հարգելի էմինի հորեկյանի նկարագրությունը կերևի արդեն կարդացել եք լրագիրներում. մի շատ փառավոր տոնախմբություն էր, որ մանավանդ նշանավոր էր ռուսահայերիս համար, թե՛ ռուս գիտնական ընկերությունք, թե՛ ուսումնարաններ, թե՛ Համալսարանը, և վերջապես ինքը լուսավորության նախարարը ներկա էին այս հանդեսին: Թողում ասել մերայնոց՝ Թյուրքիայեն, Պարսկաստանեն, Կովկասեն և ևլորսական արևելագետների ուղարկած շնորհավորությունքը և ողջունական նամակները: Սևդանի վրա կարդացած Ձեր գողտրիկ տողերը գեղեցիկ տպավորություն դործեցին հանդիսականաց վերա, որո վասն պ. էմինը ինքը անձամբ անկարող լինելով գրել (ձեռքի դողի պատճառով), խնդրեց ինձ հատկապես ողջունել Ձեզ և հայտնել յուր անհուն շնորհակալությունը Ձեր անկեղծ ղգացմանց և բարեմաղթությանց համար: Այս փառավոր հանդեսը հավերժացնելու դիտմամբ՝ լույս կտեսնի նորա նկարագրությունը՝ հանդերձ նույն օրը արտասանած ճառերով, շնորհավորական նամակներով, ուղերձներով ու ձեռագրերով, որպես և յուր իսկ էմինի համառոտ կենսագրությամբ և լուսանկար պատկերով: Այդ դրքույկի խմբագրությունը ինձ է հանձնված և հուսամ, թե ամառս պատրաստ կլինի: Անշուշտ, յուր ժամանակին Դոք կստանաք մի օրինակ:

— Խոսելով լուսանկար պատկերի մասին՝ ի դեպ է հիշել աստ, որ Դոք շատ լավ կանխիք, եթե ուղարկեիք 2 օրինակ Ձեր լուսանկարներն՝ ինձ և պ. էմինին (որ վաղուց այդ ցանկությունը հայտնել է), որո փոխարեն իսկույն կստանաք և մերը. այդ մասին հատուկ կխնդրեմ Ձեզ և կհուսամ, որ անտես առնելու չեք:

Այժմ մի քանի խոսք մեր սիրելի ժողովրդական գրականության մասին. որ վաղուց հետևեալ դիտավորություն ունիմ՝ ի նպաստ մեր ժողովրդական գրականության ուսումնասիրությանը, պատեհ հանգամանքներում հիմնել մի մասնագիտական հայ աղգադիր պարբերական հանդես՝ 1 կամ 2 ստվար հատոր տարեկան, ինչպես այլ աղգաց մեջ 10—20-ով գոյություն ունին — մի միջոց, որ ըստ իս, դյուրություն բնծայելով նախ՝ այժմ բաղմաթիվ մեր բանասիրաց և ծրագրողաց՝ իրենց տարժան աշխատությամբ տարիներով հավաքած նյութերը որոշ և մասնագիտական խմբագրությամբ հրատարակելու և իր ժամանակին՝ որոց հարկն է ուշադրությունը գրավելու կնպաստե, ապա՝ յուր քննական մասով պարզելու և բացատրելու այդ նյութոց ամենամեծ կարևորությունը թե՛ ժողովրդի կենցաղի ուսումնասիրության, թե՛ ընթացիկ դրականության բարգաւաճման, և թե մանավանդ հայ լեզվադիտության ղարգացման համար: Ուրեմն հանդեսը կբաղկանա 2 մասերի. մեկը նվիրյալ ժողովրդական կյանքին՝ բառիս ընդարձակ առմամբ, նկարագիր նորա կենցաղի, բարուց, սովորույթից, հավատալաց և այլն. և մյուս նյութ և քննություն լեզվին (բառեր, ոճեր, դարձվածքներ, քերականական նկատողությունք բարբառների մասին) և գրականության (առասպել, պրուլց, հանելուկ, երգ, անեծք և այլն) վերաբերյալ: Կհուսամ, որ հանդես հրատարակելու պատեհ ժամանակը մերձ է, և եթե ոչ առաջի-

* Բերվում են հիշյալ թարգմանության մեջ տեղ դրած սխալները, որ մենք ավելորդ համարեցինք տալ այստեղ — Վ. Վ.:

կա աշնանը, զեթ ձմեռ կամ վաղ դարուն պետք է որ լույս տեսնի Հայ ազգա-
պրական հանդեսը: Իսկ բուն ծրագիրը՝՝ թե՛ հրատարակելու մասին և թե՛ առ-
հասարակ նյութը հավաքելու ձևնարկը՝ ժողովելու ձևը, եղանակը, նյութոց
տեսակները, նոցանից կարևորագույնը հարմարագրության և ուղղագրության
նկատմամբ պայմաններ և կանոններ և այլ անհրաժեշտ գիտելիք,— դուցե ա-
ռանձին գրքույկով տպագրվի ավելի վաղ և տարածվի ձրիապես:

Ահավասիկ Ձեզ տի նորություն, որ քաջահույս եմ, թե ուրախության առիթ
պիտի լինի Ձեզ համար: Եթե աստված հաջողե այս մասին Կովկաս ղնալու՝
դուցե հնար լինի ինձ Տրապիզոն հանդիպիլ՝ Ձեզ տեսնելու և հայնժամ ավելի
մանրամասն կիսուինք: Բայց և այնպես՝ նամակիս պատասխանը կհուսամ
շուտով ստանալ Ձեզնեն:

Առայժմ ընդունեցեք իմ խորին հարգանաց հավաստիքը առ Ձեզ՝

Ձեր խոնարհ ծառա

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆ

12 մայիս, 1886 թ.

Մոսկվա

5.

Սրբազան Հայր.

Նախ թույլ տվեք՝ թեև փոքր ինչ անազան, շնորհավորիլ Ձեր բարձր աս-
տիճանը¹, որ շնորհեցավ Ձեզ Հայաստանյայց եկեղեցիեն. կսիրենք հուսալ, թե
Ձեր ծանր վարչական պարտավորությանց մեջ ևս պիտի վայր չդնեք այն գրիչը,
որ ցարդ այնքան ընտիր և ղեղեցիկ երկասիրությունք է արտադրած ի վալեյս
հայ բանասիրաց և ևս առավել ունի արտադրել:

Ջարմանալի մի զիպվածով՝ Ձեր երկու գրությունքը լուսանկարներուդ հետ
միասին ստացա ևս ներկա հոկտեմբերի մեկին, վասն զի այդ իսկ օրը վերա-
դարձա Անգլիկոսէսէն, ուր դացած էի ամառը և ուշանալուս պատճառն ևս
հիվանդությունս էր (ջերմ), որ արգիլեց ինձ մինչև սեպտեմբերի վերջը՝ բնավ
խափան լինելով ծովով վերադարձիս և մանավանդ ի ցավ սրտիս՝ Տրապիզոն
հանդիպելուս, ինչպես ի սկզբան կբաղձայի:

Վաղուց սպասած լուսանկարներուդ համար թե՛ մեծ. պ. էմինի և թե՛ իմ
խորին շնորհակալությունքն և անկեղծ ուրախությունքս՝ փոխադարձ պատկե-
րոք ընդունել բարեհաճիք:

Ջբաղված լինելով հույժ և հուսալով մոտ ժամանակներս ավելի ընդար-
ձակ նամակ գրել Ձեզ, կբավականանամ այսքան միայն հիշել Ձեզ առայժմ.
Թե էմինի հորելլանի «Հանդիսագիրքը» դալ շարաթ կսկսվի տպագրվել և ան-
շուշտ իր ժամանակին կուղարկվի Ձեզ մի օրինակ: Իսկ հայ տոհմադրական
ժողովածուի² վերաբերմամբ, այս ձմեռ կուհասամ հրատարակել նյութեր հա-
վաքելու ծրագիրը, որո համար բավական բան ունիմ հավաքած այս ամառ և
անցյալ օրն ևս Թուս կայսերական ընկերության³ մեջ քանի բան հաղորդեցի
այս մասին:

Մեր սիրելի և ղերամեծար էմինի հանձնարարությամբ, որ յուր բարենները
ընդ սմին կուղարկե Ձերդ Սրբազնության, կխնդրեմ ուղարկել նորա մատենա-
դարանում պակասած Ձեր երկասիրությունք. «Լնթերցարան» Ա և Բ⁴ (2—3
օրինակ). «Հնոց-նորոց», «Շուշան Շավարշանա», «Քրիստոնեական ուսումն

Հայաստանյայց եկեղեցւոյն⁵ (մեկ-մեկ օր.), որով մեծապես կպարտաւորեցնեք:

Հանձնելով զիս աղոթից Ձերո,

մնամ խորին հարգանք և անձնվիրությամբ

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆ

21 հոկտեմբերի, 1886

Ի Մոսկվա

6.

Գերապատիւ Սրբազան Հայր,
հարգելի ու սիրելի բարեկամ.

Վաղուց է Ձեզանից ես ոչինչ լուր չունիմ. լսելովս՝ Մուշ էիք գնացել, բայց չգիտեմ երբ եք ուղևորվել և չնկատեմ, երբ վերադարձել և ինչպես է այժմ Ձեր առողջության վիճակը:

Տակավին պատասխան չստացած Ձեզանից «Մ. էմիլի հիսնամյա Հոբելյանի հանդեսի» մասին, որից յուր ժամանակին մի օրինակ ուղարկել եմ Ձեզ, ահավասիկ գալիս եմ ողջունելու Ձեզ երկրորդ գրքույկով՝ վաղուց խոստացածս «Հայ ազգագրության ծրագրով», որի ճակատին դրի ինձ համար միշտ հարգելի Ձեր անունը: Այս մի պարտք էր, որ ես կատարեցի ամենայն հաճությամբ. հայ ազգագրության առաջադիմությանը, տարածմանը, հետաքրքրելի և համակրելի դարձնելուն մեր հայրենակիցների առաջ Դուք ամենից ավելի եք նպաստել, կասեմ ուղղակի— Դուք եք գլխավոր շարժում պատճառողը. ուստի և ամենայն իրավունքով— «ղբուղի ի քոյոց Քեզ մատուցանեմ»:

Բացի «Ծրագրիս» ազնվաթուղթ մի օրինակից, որ ուղարկում եմ հատկապես Ձեզ համար, կստանաք մոտ օրերս ևս 4 օրինակ՝ բաժանելու ըստ տնօրինության:

Մինչ Դուք կարդում եք ներկա նամակս՝ ես աճապարում եմ սրընթաց շոգեկառքով դեպի Եվրոպա. Լուսավորության նախարարության տնօրինությամբ՝ գնում եմ ես արտասահման գիտական նպատակով, ուր կմնամ մի տարի: Կդիգերեմ ես տարվոց մեծ մասը Գերմանիա (մի երկու համալսարանական քաղաքներում), կանցնեմ թեթևակի Վենետիկ, կմնամ քանի ամիս Փարիզ և ապա՝ գուցե Պոլսով վերադառնամ Ռուսաստան: Առ այսու ամենայնիվ՝ խնդրեմ Ձեր նամակները ուղղեք առ այժմ նախկին հասցեով (ձեմարան Լաղարյան), ինչպես ցույց է տված «Ծրագրիս» մեջ:

Ուրիշ գրելիք առայժմ չունիմ: Շատ բան, ինչ որ պետք է ասեի Ձեզ նամակով՝ Դուք կգտնիք Ծրագրում: Ուստի անհամբերությամբ սպասելով Ձեր պատվական գրությանը և մանրամասն դիտողությանց,

Մնամ խորին հարգանք
առ Ձերդ Սրբազնությունն,
Անձնվեր ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆ

1 սեպտեմբեր, 1887

Մոսկվա

Քանի մը Լեւիաքնիւ, որոց գրի առնելը շատ կարեւոր է.

1. Ցանկալի «Գաղտնիկ-Աղբուր» (Մանանա) մի այլ խմբագրությունը կամ օրինակը՝ սակավ տարբերությամբ մանրամասնությանց մանավանդ թե լիամասն կասեմ, վասն զի մի օրինակին պակաս մի կա. «Խորթ մեր զհորնեք

հրեղեն աղջիկ դմշկեց ծովը. ուլետ ձուկը էկավ, կուլ տվեց. պառավ առավ իր աղջիկ տարավ թագավորի տուն ու նստուց հարսի տեղ... Գիշերվան մեջ՝ աղջիկ որ ձկն փորն էր, ձեն կուտա ժամհարին. «Ժամհար... երթաս թագավորի լածին ասես... իմ Գառնիկ աղպեր չգենես»։ Քույրը կխնդրե չղենել յուր եղբորը. ուրեմն եղբորը զենն՝ կուզեին, ո՞վ և ինչու։ Ահավասիկ ուր է մի հերիաթի պակասը։ Եվ արդարև. գերմանական և ռուսաց նույնանուն և նման-երինակ հեթաթները կպատմեն, թե խորթ մեր՝ նստեցնելով զյուր աղջիկ հարսի տեղ՝ կդրդեր յուր աղջկան խնդրել թագավորի լածեն զննել Գառնիկ-Աղբորը։ Իսկ Գառնուկ կվազվզեր ծովի ափը ու կզանգատեր քոռչը։ Երևանա խմբա-դրությունն ևս (ժողովածու՝ Նավասարդյանի)² կհաղորդե այս մանրամասնությունը։

2. Զկա՝ արդյոք տարբեր օրինակ և ավելի մանրամասն «Աղբյուրի հարս» հեթաթին («Համ.-հոտ.», էջ 179, թերևս Աղբերուն և հալեորի տեղ այլ պարագայք լինին), որ մի պատվական բան է։

3. Մանկության ժամանակ ևս շատ լսած եմ իմ մամես, որ Վանա կողմերեն էր, «Ծովալին քագավորի և յուր 7 կամ 40 աղջկանց մասին, ույք աղավնու կամ այլ թռչունի կերպարանք առած կթռչին կերթան լողանալու անմահական ջրերի մեջ կամ նշանավոր լճի մեջ։ Այստեղ կհանին նոքա իրենց թեւերը (կամ ըստ այլոց շապիկները), կդառնան մեկ-մեկ հուրի մալաք ու կմտնին ջուրը. իսկ հեթաթի հերոսը, որ ջրի ափին՝ քարերի մոտ թաքնված էր, պահում է փոքր քվեր թևերը (կամ շապիկը)։ Հուրի մալաքները լողանում են, հագնում են իրանց թևերը, դառնում են դարձյալ թռչուն, գնում են իրենց տեղերը. փոքր քույրը մնում է հերոսի մոտ և դառնում նորա կինը։

4. «Ինքը սի քիզ— միբուքը օխտը քիզ»։ Վարոց կամ գավազան մի ունի պողպատե, որից կայծակ կարձակե. յուր տերը դեերի կամ վիշապների պաշտամանց կհարմարի։

5. «Քառ դառած՝ քագավորի տղեն» կամ «Քառացած աբխալոդին», թագավորի աղջկա սիրելին՝ ջատու պառավի կախարդությունից (գավազանով կամ կանաչ ճյուղով կզարկե երիտասարդին) քար է դառել յուր ապարանքի մեջ։ Աղջիկը երկար միջոց կորոնե. վերջապես կգտնի և արտասուքի մի կաթիլից, որ կընկնի պատանու երեսին՝ նա կխնդանա, կարծես խոր քնից արթննալով։ Կան և այնպիսի հեթաթներ, ուր պատանու տեղ աղջիկն է քար դարձել. հասկանալի է ըստ ինքյան, որ սիրուհուն որոնողը և արտասուք թափողը այս դեպքում արքայորդին պետք է լինի։

6. Զկա՝ արդյոք այլ օրինակ «Երազատես» հեթաթին (Մանանա), ուր քացի այլ մանրամասնություններ՝ հիշած լինեին ահեղ հերոսների (շատ ուտող, շատ խմող, արագաքայլ...) անվանքը, օրինակ՝ Ուտա՛ն (կամ Ուտուկ), Ճմո՛ն (կամ Խմակ), Դուսա՛ն (կամ Խոր-գուսան), Վազդո՛ւն... կամ գուցե այլ ինչ։ Այս շատ հետաքրքրական է։

7. Հեթաթների ամենասիրելի եղանակներեն (մոտիֆ)՝ համարյա ամեն ազգաց մեջ— կերպարանափոխությունն է. այսինքն որևէ ջաղուի կախարդությամբ մարդս ընդունում է կենդանու կամ թռչնոց կերպարանք։ Մի հեթաթ կա՝ եվրոպական ամեն ազգաց մեջ տարածված (Ալեքսանդրապոլում՝ իմ ծննդավայրում այդ հեթաթին «Հուրմանի» կասեն), ուր փեսա արքայորդին՝ կախարդական զորությամբ երևում է զօրը օձի կերպարանքով, իսկ գիշերը ընդունում է յուր իսկական պատկերը։ Ընդամին ամուսնու այս կերպարանա-

փոխության մասին ոչ ոքի պիտի չհաղորդեն նորա կինը: Բայց հետևելով հերիաթների պահանջմանց՝ նա չկարողացավ պահել և հայտնեց յուր քույրերին. ուստի և կորցրեց յուր սիրելուն և գտավ նորան միայն երկաթի մաշիկներով և երկաթի գավազանով որոնելով երկար տարիներ, երբ մաշիկներն էլ, գավազանն էլ արդեն մաշված էին: Բայց դեռ դորանով ևս չէ վերջանում աղքատապանքը. Արքայորդին պառկած է ջադու-կնոջ մոտ, անզարթ քնո մեջ ընկըղմած. շատ է աշխատում աղքիկը, մինչև հաջողվում է նորան հեռացնել կախարդին պատանու մոտից. զարթնեցնել խոր քնից և փախնել միասին:

Տ. «Ոսկի ձու ածաղ հավի» հեքիաթը, որ գլուխ ուտողը— թագավոր կղառնա, իսկ սիրտ կլանողը՝ ոսկի կթը:

Ոչ անդեպ կհամարիմ դնել այստեղ և մի քանի բառեր, որոնց ճիշտ նշանակությունը հատուկ կխնդրեմ հաղորդել ինձ Ձեր նամակներե մեկի մեջ:

«Մանանա», էջ 157. «Սև» և «կարմիր-կանաչ»— ինչ պետք է հասկանալ.

Թռչուն գաղան, հրեշ— 158. «Մետակ», «մետակ կթաշի աղքկաց գլուխ»

104. «Բիբուկ»— բախվել, 190. «հոկել», «լաճ կհոկի»— խոռվի՞լ:

190. «Ափս»— վերնատուն: 190. խալ (խալ դնել)— նշան դնել:

194. Տելալա— անդազար: 201. «Գուալի աղքիկ»— գեղեցիկ:

201. Լալ ու դուրա— դուրա ի՞նչ քար է: 217. «Ստեփուն թագավոր»— տե՞ղ է, թե՞ անուն: 214. «Ալայը»— աղքիկ— կոչյալ: 216. «Ալնախ»— շապի՞կ, իշխի՞կ: 216. «Ինս ու ջինս» (կամ խն ու ջին) ասելով ի՞նչ են հասկանում. ջին— ոգի կարելի է թարգմանել, իսկ խ՞ն (խնո)— բառախաղությո՞ւն է արդյոք, թե ալ ինչ: 221. Հաղարան բուրբուլ— Հաղարան ասելով ի՞նչ են հասկանում. արդյոք ձայնի հաղարավոր դայլայլիկների՞ և գեղգեղանա՞ց համար՞:

նույն

Մ ա ն ր ա գ ր ու ք յ ու ն ն ե ր

1.

1. Գրիգոր հալաթյանը Սրվանձտյանցին է ուղարկել հետևյալ հարցացուցակը (12 փետրվարի 1881):

«Դավիթ Սասունցի»

Մթին և դժվարիմաստ դարձվածքներ.

Ա. Ինչ կամի ասել— «Դուք զձեր մատեն ինչի՞ վրա եք էրե»— էջ 142:

Բ. Առաջիկա աշխարհագրական կետերի մեկնությունը. «Սև սաբի բուր... ծծմակաց ֆիք (բ). Մշու վերևով պտան (բ) քաշած... Սեղան սարու գոտի (շղթա կամի ասել)... ձապաղջրու դուրան: Չորս դարգահ թողեց (ի՞նչ դարգահ և ինչպես)»— էջ 145:

Դ. Մրսրբ ասելով՝ մշեցիք Մոսո՞ւլ են հասկանում, թե՞ Եգիպտոս:

Դ. Երբ են գործ ածում «Հացն և գինի, տեր կենդանի» ձայնարկությունը և ինչ խորհուրդ ունի նա— էջ 150:

Ե. Ինչ է նշանակում այս առածը՝ «Իերին գին եղնի— տիրուն կհասնի». այս ալլաբանության միտքն ինչ է— էջ 150:

Ձ. «Աստծու դատաստան» ասելով արդյոք մենամարտություն պետք է հասկանալ, թե՞ վիճակ, վիճարկություն— էջ 150:

է. Որտե՞ղ գտանի «Պող-բլուր» և շունի դա որևէ առասպելաբանական ավանդություն ժողովրդի մեջ— էջ 156:

Ը. Որտե՞ղ է «Մաբուրուկու Բանձրիկ Աստվածածնի» վանքը. արդյոք դա Ասպարածինը չէ՞: Ի՞նչ հետաքրքրական դիտելիք կա Մարութակա մասին— էջ 159:

Թ. Ո՞ւր է «Զօրկը» և ինչ ավանդություն կա դորա մասին— էջ 159:

Ժ. Արդյոք՝ քաջի այս երկու բրդուն՝ երգերից (խոլբաշու և Սասնու կնոջ)— չկա՞ն այլևս. կամ Դավթի, կամ Խանդուտի և կամ Մհերի— էջ 160—162:

ԺԱ. Ի՞նչ է «չորկի տկի քանը». արդյոք մուրե խնոցի չէ՞, որով հայաստանցին մածուն հարե և կարագ պատրաստե. թե՞ դա այլ ինչ է— էջ 161:

ԺԲ. Արդյոք այս «խաբամանը» դա՞շտ է, ձո՞ր է, գե՞տ է— ինչ է. թե՞ փոխաբերություն— էջ 161:

ԺԳ. Ի՞նչ ասել է. «Խաբուն, որ ջուրն ելավ՝ կը ժողվե Բերե ճոն ու բլուր արմաղան (պարզե՞)». «ձո՞ն ու բլուր»— մեծ ու պստի՞կ է արդյոք նշանակում. և եթե այսպես է— ի՞նչ իմաստ ունի բոլոր նախադասությունը— էջ 162:

ԺԴ. Որտե՞ղ է «Կապուտկողը» և ինչ հետաքրքրական գիտելիք կա նորա մասին— էջ 141:

ԺԵ. Որտե՞ղ գտանի «Մառնիկ գեղը» (Մառնիկ գեղի հնին (՞)— էջ 166:

ԺԶ. Ո՞րտեղ է «Ավզուտա» դաշտը, արդյոք ավագ բառից չէ՞ դա ծագում— էջ 167:

ԺԷ. Չունի՞ն արդյոք առանձին նշանակություն այս անունները. «Շրբկան-խորասական», «Հրմզու-լոռա», «Դուրդիզ» կամ «Զուրչիզ»— էջ 169:

ԺԸ. Չունի՞ արդյոք մի ուրիշ այլաբանական մեկնություն այս դարձվածը՝ «ըտոնք փոլ ին— կոտչով շին» (արդյոք— «կին են— տղամարդիկ շե՞ն», քե՞ղոփա քույլ էակներ են— վնասակար (վնասող) շեն)— էջ 172:

ԺԹ. Ինչպե՞ս պետք է հասկանալ այս առածը.— «Զաղչիկն առ եզդինուց. որ տղեն էղնի փեռիսսան». [աբղյոփ «առնել եզդինուց»— փախցնի՞լ, առևանգե՞լ է նշանակում, թե՞— ամուսնանալ եզդինի աղջկա հետ. և «քեռիստան»— կտրի՞նք ասել է, թե՞ «քեռու նման» (քեռուն քաշել, քեռուն նմանիլ)]— էջ 172:

Ի. Ո՞րտեղ է «Զրդուրա շամբ» և «Լոխուրա ջուր»— (ջուր— գե՞տ արդյոք)— էջ 178:

ԻԱ. Ի՞նչ է շափ շնիկը. կո՞տ է արդյոք և ֆանի՞ զրվանֆա կամ հոխա կամ լիտր կքաշե յուրաքանչյուր շնիկը (կորեկի)— էջ 179:

ԻԲ. Արդյոք մի այլ նշանակություն կամ ստուգաբանություն չունի՞ «Մհեր» խոսքը և շունի՞ք ինչ ինչ ծանոթություններ «Մհերի դուան» և «Զրմփզրմփ մաղաբալի» մասին, բացի «Դուր ու բուր» մեջ հիշածից — էջ 126—135:

Ահա սորա են «Դավիթ Սասունցու» մթին և երկմիտ դարձվածները. հուսով եմ՝ մերժելու չեք խնդիրս— շուտով լուսաբանելու այս կետերի իմաստը, որոց համար այժմեն իսկ ընդունեցեք իմ խորին շնորհակալությունս:

Հայրական յարձնությանցդ կարոտ

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆ

Ի պատասխան այդ հարցումների Գարեգին Սրվանձտյանցը գրել է հետևյալ բացատրությունները.

Ա. «Գուրք զձեր մասուն ինչի՞ վրա եք էրև» — Ձեր սրտեր ի՞նչ բանի համար ավրեր եք, — կամ ինչու տխուր եք:

Բ. «Սե սար... մինչև սեզանվոր» — Մշո դաշտի հարավային կողմի լեռան մեկ ծայրի անունն է Սե սար, մյուս ծայրին Սեղան սար, այս դժին մեջեր՝ ըստ ձևույն և ըստ տեղվույն զանազան անուններ ևս ունեն. զոր օրինակ «Ծծմակ» անունով գեղին մոտ դուրս ինկած լեռան կատարին կասին Ծծմակաց ֆիք: Այս լեռան շղթայի մեջն է նաև Մուշ ավանը: «Պատանն» է — պարիսպ: «Գոտին» — շղթա: «Ճապաղջուր» գավառ է, որ կիցնա Սեղան սարի հտեղ, «Գուրան» — հարթ երկիր, կամ տաճկաց բառով՝ դուդ: «Դարգահ» պարսպի մեծ դուռն կնշանակե: Ամբողջ խոսքին իմաստն է՝ այդ լեռանց շուրջը պարպելով շինած է բերդ. շորս դուռ շինած է պարսպին:

Գ. «Մըսըր» այսօր մշեցիք Եգիպտոսին կասեն, որովհետև այժմ ծանոթ է իրենց այդ երկիրը, ուր Պուլսեն կերթեկեն իրենք. այլ կկարծեմ թե հառաջագույն Մուսուլն էր իրենց ծանոթ և իբրև մերձավոր ծաղկյալ և Հայաստանի հետ հարաբերություն ունեցող քաղաք:

Դ. «Հացն և գինի, տեր կենդանի» երգումն ընդհանուր չէ, ավելի այսպիսի վեպերու մեջ կտեսնվի դորժածելը:

Ե. «Գերին գին եղին — տիրուն կհասնի» — եթե գերի ինկած անձինք վաճառքի կամ փրկանքի հանվին, դանոնք գնելու կամ փրկանավորելու իրավունքը բուն գերիի տիրոջն է: Այս իրավունքով, կամի ասել քեռի Թորոս, Աբամելիքի որդիք գերի են մնացեր Մսրամելիքի ձեռքը, երթամ պատաստանով անկե առնում՝ իբրև բուն տեր այդ գերի տղայոց:

Զ. «Աստծու դատաստան» արդարություն ատյան կհասկցվի. ինչպես քիչ մը վար կբացատրե «Շեքիաք» բառով:

Է. «Պող բլուր» — Պողը՝ գեղ է Սեղան սարու մասերու մեջ. յուր մերձ ունի բլուր մի մեծ: Նմանություն է այս խոսքը:

Ը. «Մարութակ» մի մեծ և բարձրաբերձ լեռն է, Մշո հիշատակյալ լեռանց շղթային կհարաբերի, և ամեն կողմեն կերևի այս լեռան ձյունապատ գագաթը, որ ավելի Տիգրանակերտու կողմը հականե: Թեպետ Մուրաքսկ կանվանին, բայց կավանդին, թե ս. Մարութա Ասորին երևելս պարսից Շապուհեն կատարված բյուրավոր քրիստոնյա նահատակաց նշխարները ամփոփելով՝ և Մարտիրոսաց ֆաղաֆ կամ Նիբելեֆալ շինելով նշանավոր պատմության մեջը, այս լեռան վրա ճգնած լինի, և յուր անունն այս լեռը անվանված: Իսկ «Բանձրիկ Աստվածածնի վանքը» կհասկցվի «Բարձրահայաց Ս. Աստվածածին». որ այժմ չեն է, և Նիբելեֆալ ավերումեն զկնի վերոհիշյալ Մարտիրոսաց նշխարները այս վանքը ամփոփված են, որ կըսվի Արզնու Աստվածածնի վանքը, դեպի Տիգրանակերտը, Մշո լեռանց հտեղ:

Թ. «Զօրիկ» հայ մարդու անուն է. «Իավառ» — Սասնո գավառի մեկ մասն է, հայաբնակ: Զօրկա կամ Զօրիկի վրա բան մի չգիտեմ:

Ժ. «Այդ երկու բրդուճ երգերեն ի բաց» չեմ կրցած գտնել այլևս:

ժԱ. «Զոբկի տկի թան» — Զոբիկ կասեն վրանաբնակ ոչխարաբույծ քրդերուն, որոնց կաթն ու թան չափազանց առատ լինելով, և տիկերու մեջ լցած ու կրած ժամանակ՝ տիկերու բերնեն կթափթփի, որոց վրա ճանճեր հանդես կանեն: Նմանություն մի է այս խոսքը, որով կհեգնեն ղխուրաշին, որ այնքան մե-

ծախսություններ գնաց և այսպես խայտառակ դարձավ,— բերնեն լորձունքները թափելով իբրև թան, որ կթափի Չորկի տիկերեն և այլն: Կարելի է նաև «մոռթե խնոցի», որ է տիկ, հասկնալ, մածունը հարելու օրինակով:

ԺԲ. «Խարաման ինչ է» — ճիշտն չգիտեմ, բայց իմաստն և տեղական համայնքեն կհասկցվի ձուր, ուր դիակներ ինկած լինին կուլո միջոցը, և գարնան հեղեղները դանոնք գլորելով բերեն այս հյուղի առջև, իբրև Արմաղան — ընծա:

ԺԳ. Սովոր են գեղերու կանայք և աղջիկները հեղեղը եկած ժամանակ և ցամքած ժամանակ երթալ ուլնիկ կամ այլ և այլ մետաղե և ապակիե իրեր ուրոնել, դորս հեղեղը դանազան ավերակներե կամ թաղված տեղերե քակելով տանելով կրերե: «Ճոճ ու բլորը» այս է: Իսկ եթե առաջին բառին միջև «և» գիրը ավելնա, իմաստը հայտնի է. և կիները թշնամիներու համար խոսած կլինեն այնժամ, թեև՝ փոխարենությամբ դարձյալ:

ԺԴ. «Կապուտկողը» բարձր և լերկ լեռ մի է, Վանա ծովուն հարավ եզերքնդ մեջ Վանա և Բաղեշո, գեռ այգ անուն կկրե, որ կվերաբերի հին Ռշտունյաց պալառին և կգրվի յուր անուն նաև «Ընծաքիսար», ուր կա Ընծակ անուն գեղ մը և Ս. Հակոբա վանքը: Արծրունյաց նախարարաց տուն եղած է երբեմն: Իսկ ուրիշ գիտելիք մի չգիտեմ:

ԺԵ. «Մառնիկ», գեղ երկու են Մշո մեջը. մեկը՝ լեռան Մառնիկ, որ Մուշ ավանին մոտ է, իսկ մյուսը կիյնա դաշտը, Զուխուր ըսածի մասին մեջը, Սև սառի, կամ Խութ Սասուն լեռնագավառի ստորոտը: «Հնին» չրանցքին ասել է. սովորաբար գետերու անցքը՝ հուն կանվանին մշեցիք, այսինքն գետի մը տարածյալ վայր, ուստի անասունք և մարդիք անց ու դարձ կանեն:

ԺԶ. «Ավզուտ» գեղի անուն է, և այս անունով երկու գեղ կան Մուշ. «Ավզուտա դաշտ», Ավզուտ գեղի արտեր կհասկցվի:

ԺԷ. «Շըբլկան-խորասական, Հմգա-լոռա փեհլեաններ» — իբրե գավառի անուններ կհասկցվին, թերևս «Շըբլկան-խորասական» անձնական անուններ լինեն. բայց և կազմություն չհարմարիր. իսկ «Հմգա» չհասկնալով, կրնանք «լոռա» հասկնալ, այն է «լոռի գավառեն եկած փեհլեան». Արդեն Խանդուտ խանըմ և վեպի մյուս հանգամանքներ Վրաստանի հետ վերաբերություն ունեն. Լոռին ալ նույն սահմանն է, և հին սովորություն է, որ Պարսկաստանեն, Դաղստանեն փեհլեաններ կուղային կշրջին քաջաց հետ ըմբշամարտելու և Խանդուտները հափշտակելու:

«Գորգիզ կամ Զորջիզ» սովորական անուն է վրաց ազգի մեջ:

ԺԸ. «Ըտոնք քոլ ին, կոտշով շին». կնշանակե կին են, տղամարդ չեն:

ԺԹ. «Ջաղջիկն առ եզդինուց, որ տղեն էղնի քեռիստան» — Ամուսնացիր եղգիի աղջկան հետ, որ տղեն նմանի քեռիին՝ ըսել է:

Ի. «Զուխրաշամբ» Մշո դաշտի արևելյան ծայրն է, ուր միջով գետ կբխի «Զոխուրա ջուր» Զոխուրա գետ ասել է:

ԻԱ. «Շնիկը» արմտիկի չափն է. մեկ շնիկը 24 հոխա է:

ԻԲ. «Մհեր» բառին, Մհերի դրան և «Ջըմփզըմփ մաղարին» վրա ինչ-որ «Գրոց-բրոցի» մեջը կա՝ կա, նոր բանն այն է՝ որ այդ շիանաբերդ անգղիացիք կրկտեցին այս տարի, նոր հնությունները հայտնվեցան, միայն այս լեռնաբերդը, որ Մհերի դրան կից և Ջըմփզըմփ մաղարի վրանն է, իմ նոր տեսությունս կնկատեմ, թե դա է բուն Վանը, որ հնությամբ և ավանդությամբ լի է, իսկ այժմյան Վանը Շամիրամի շինվածը կընդունիմ (Գր. Խալաթյանի ֆոնդ, բաժին V, № 732):

2. «Փարպեցի» — խոսքը Գր. Խալաթյանի «Ղաղար Փարպեցի և գործք նորին» աշխատության մասին է, որ լույս է տեսել Մոսկվայում 1883:

3. Սրվանձտյանց Գ., Համով-Հոտով, Կ. Պոլիս, 1884:

4. Սրվանձտյանց Գարեգին, Մանանա, Կ. Պոլիս, 1876:

5. «Արևելյան մամուլի» մեջ լույս է տեսել Գ. Վ. Սրվանձտյանցի «Մոկացի հայոց հարսանյաց պար» (1883, հունվար, էջ 41—42), «Ակնա ժողովրդական երգեր», «Հարսնառու գնացող կահայք առ հարսն ասեն» (1883, օգոստոս, էջ 374—377), «Դավառական ժողովրդական երգեր Վանեն, Մուշեն, Պուլանըխեն» (1883, հոկտեմբեր, էջ 465—468), «Ծածուկ սիրողի երգեր» (1883, սեպտեմբեր, էջ 440), «Գովասանք ծաղկանց» (1884, մարտ, էջ 137—139, ապրիլ, էջ 177—179), «Գովասանք Պյուլպյուլին և վարդին» (նույն տեղում, էջ 180—183):

6. Սրվանձտյանց Գ., Թորոս Աղբար, հատ. Ա, Բ, Կ. Պոլիս, 1879, 1884:

7. Սրվանձտյանց Գարեգին, Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874:

8. Սրվանձտյանց Գ., Շուշան Շավարշանա, Կ. Պոլիս, 1875:

2.

1. «Արևելք» լրագիրը լույս է տեսել 1884—1892 թթ.:

2. Պրոֆեսոր Քերովբե Պատկանյան — նշանավոր արևելագետ, Ռուսական կայսերական ակադեմիայի անդամ:

3.

1. Բառագիրք — խոսքը «Մանանային» կցված բառարանի մասին է:

2. Սրվանձտյանց Գ., Նոր ընթերցարան, Ա և Բ, Կ. Պոլիս, 1883:

3. Սրվանձտյանց Գ., Քրիստոնեական ուսումն Հայաստանյաց սուրբ եկեղեցվո, Կ. Պոլիս, 1877:

4. Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լույս էած Ք. Պ., ս. Պետերբուրգ, 1852:

5. Կահլոկեցի Պետրոս վարդապետ, Ասիական ճանապարհորդութիւն ի հայրենիս, Կ. Պոլիս, 1881:

6. Տեր-Սարգսյան Երեմիա եպիսկոպոս — ազգագիր-բանասեր, հեղինակն է «Հայրենասիրութիւն հայոց» գրքի, Կ. Պոլիս, 1872: Ակնարկված ձեռագրի հրատարակությունը հայտնի չէ:

7. Փիրղալեմյան Ղևոնդ, հեղինակն է «Ծանապարհորդութիւն ի մայր աթոռն Արարատեան...», Կ. Պոլիս, 1871: Խալաթյանի ակնարկը վերաբերում է թերևս «Նոտարք հայոց, հավաքեալ ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետ Փիրղալեմեանց Տոսբեցվոյ» գրքի ձեռագրին, որ հրատարակվել է Կ. Պոլսում, 1888 թ.:

8. Աղվանյան Գրիգորիս արքեպիսկոպոս (1827—1893): Եղել է վիճակավոր՝ Ղարսում, Գանձակում, Բաթումում: Գանձակում բացել է երկսեռ դպրոց: Թողել է ձեռագիր աշխատանքներ՝ Ղարսի և Գանձակի ազգագրության վերաբերյալ:

9. Թովմասյան Խաչիկ — բանասեր-պատմաբան. գրել է «Հայք ի Հնդիկս, անգլիացվոց և հոլանդացվոց» (Վենետիկ, 1880): Ակնարկված ձեռագիր աշխատությունը մեղ անհայտ է:

10. Շիրոյան Ղևոնդ— բանասեր-բանահալար, հեղինակել է «Անխոս Մարգարիտը» (Կ. Պոլիս, 1875): Ակնարկված ձեռագիրը մեղ անհայտ է:

11. Ալլահվերդյան Հ. Հ., Ուլնիա կամ Զեյթուն, լեռնալին ավան ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1885:

12. Միրախորյան Մանվել, նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ զավառս Արևելյան Տաճկաստանի, տեղագրութիւն, սարեն ձորեն, հնեն և նորեն, մաս Ա—Գ, Կ. Պոլիս, 1884—1885:

13. «Յուր վարժապետից»— նկատի ունի Սրվանձտյանցին:

14. Խոսքը նորայր Բյուզանդացու «Բառգիրք ի գաղղիերեն լեզվի ի հայերեն» (Կ. Պոլիս, 1884) բառարանի մասին է:

4.

1. Հայագետ Մկրտիչ էմինի հոբելյանը մեծ շուքով տոնվել է 1886 թ. Մոսկվայում:

2. Տոնապետյան Պետրոս— Պոլսահայ հասարակական, մշակութային գործիչ:

3. Խոսքը հալաթյանի «Սասունցի Դավիթ» ողսերեն աշխատության մասին է, որի հայերեն թարգմանությունը լույս է տեսել «Արևելքում», 1886 (թարգմանիչ՝ Պ. Տոնապետյան):

4. Հանդես հիսնամյա հոբելյանի գիտական և մանկավարժական գործունեության Մկրտիչ էմինի, 1836—1886, խմբագրեց Գ. հալաթյանց, Մոսկվա, 1887:

5. Նման պարբերական հանդես լույս չի տեսել:

6. Խոսքը Գ. հալաթյանցի «Ծրագիր հայ աղագրության և աղգային իրավաբանական սովորությունների» (Մոսկվա, 1887) գրքի մասին է:

5.

1. Խոսքը Գր. Սրվանձտյանցին եպիսկոպոսության աստիճան շնորհելու մասին է:

2. հալաթյանը նման աշխատանք չի հրապարակել:

3. Խոսքը Խուսական կայսերական հնագիտական ընկերության մասին է:

4. Սրվանձտյանց Դարեգին վ., նոր ընթերցարան, Կ. Պոլիս, 1883:

5. Սրվանձտյանց Դարեգին վարդապետ, Քրիստոնեական ուսումն Հայաստանյալ սուրբ եկեղեցւո, Կ. Պոլիս, 1877:

6.

1. հալաթյանը իր «Հայ աղագրության ծրագիրը» նվիրել է Սրվանձտյանցին:

2. Խոսքը Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի (գիրք 2, Երևան, 1882) մասին է:

3. Գ. Սրվանձտյանցի պատասխան նամակը, ուր տրված են հալաթյանի հարցումների բացատրությունները, ստորև բերում ենք ամբողջությամբ:

Չ Հանդես, № 1

1885, մայիս 24, Կ. Պոլիս:

Մեծապատիւ պ. Գրիգոր Խալաթյանց

ի Մոսկովա

Պատուական բարեկամ.

Ապրիլի 2-ին գրածդ՝ մայիս 18-ին հասաւ ինձ, չգիտեմ ինչո՞ւ այսչափ ուշ:

Շնորհակալ եմ Ձեր դրած տեսությանց մասին «Համուլ-հոտովի» և «Իրո-րոս Աղբարի» վերաբերությամբ: Ըսած էիք թե պ. Էմին ևս պիտի գրեւ: Կսպա-սեմ: Հայր Ալիշան շատ կգնահատեւ «ղԹորոս Աղբարն», և կստիպեւ որ Կիլի-կիա ուղեորիմ և զայն երկիրն ստորագրեմ: Բայց վարչություն ի Տրապիզոն՝ կղրկեւ զիս առաջնորդ, այնտեղն ևս պարապ չեմ ելնեւ կարծեմ, և պիտի երթամ, եթե Աստված հաջողեւ: Հայկական հնություն և աղգային ավանդություն հաւա-քող հիշատակյալ քանի մը անձանց գործեր կմնան իրենց քով: Փիրղալեմյան Ղեոնդ վ. միայն այս տարի Պոլիս է. որո հաւաքածներն են ձեռագիր մատե-նից հիշատակարանք և ձեռագիր տարեգրությունք, զորս տպագր. տեսչություն թույլ չտար նույնությամբ հրատարակել, ինքն ևս դրամ չուղեւ ծախսել, ունի նաև գաւառական բառեր: Ես խորհուրդ տւի, որ պարբերական հանդեսներու մեջ մասն մասն հրատարակեւ. շհամոզվեւ, կուղեւ էջմիածին տանի: Իսկ մյուս աւձինք կպահեն իրենց մոտ իրենց հաւաքածը, առաջարկած եմ, որ գոնե ցանկ մը հրատարակեն: Ձեր նշանակած «Քանի մը հեքիաթները գրի առնել» պիտի ջանամ, երբ պատեհություն ունենամ:

Հարցուցածդ քանի մը բառերուն պատասխանը: «Սե» և «կանաչ կար-միր».— սեն է գիշերային հրեշ. կանաչ կարմիրն է արեուն անձնավորությունը, որ կշրջեն ի տիեզերս, սեն կնեւրկեւ մութ. կանաչ կարմիրն՝ բոլոր բույս, հա-տիկ և ալւն, կգունավորեւ երկինս և երկիր: «Մետակ», առանց աստառի կեր-պասիո սաւան գույնզգույն, զոր կույս աղջկունք կձգեն գլխեն մինչև մեջքը: «Բիրոնել» է բախլիլ: «Հոկել» է բարկանալ, խռովել: «Հափս» է մափուս, իբրեւ բանդ, հսկողության տակ: «Խալ»՝ կերակուր: «Տեւալա»՝ դեռեւս, տակա-վին: «Գուալի աղջիկ»՝ թագաւորի աղջիկ. գուալ թագաւոր: «Լալ ու դուրա», կսվի «լալ ու դուր» ևս. մեկ նշանակությամբ կամ կից իմաստով, կնշանակեւ քարակն:

«Աղջիկ» ալալ՝ աղջկանց երամեն. աղջկանց տեղ. խումբ: «Ալնախ»՝ յաղ-լուխ, անձեռնոց, թաշկինակ: «Ինս ու ջինս»՝ մարդ և հոգի. ինսուն և ջին: «Հա-ղարան բուրբուլ»՝ հաղար կերպ եղանակող: Բայց հատկացված է մեկ ցեղ սո-խակի, որո նկարագիրը կա ի «Համուլ-հոտովն», զոր տեսած եմ ի Բաղեշ:

Ընդունեցեք ջերմագին համակրանքս և հարգանքս:

ՍՐՎԱՆՁՏՏԱՆՑ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳԱՐ. Գ. Խալաթյանի ֆրեսկ, բաժին V, № 725: